« ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ » ՀԻՄՆԱԴՐԱՄ
«ՕՊՏԻԿԱԿԱՆ ՄԻԿՐՈՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ» ԾՐԱԳԻՐ
ԴՐԱՄԱՆԱՇՆՈՐՀ

ՀԱՏՈՒԿ ՆՊԱՏԱԿԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԵՎ

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2023թ. մայիսի 22-ից մինչև 2025թ. հունիսի 30-ն ընկած ժամանակաշրջանի համար

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Անկախ աուդիտորական հաշվետվություն	3
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	6
Ծրագրի ֆինանսավորման աղբյուրների և դրանց օգտագործման մասին հաշվետվություն	7
Ըստ Ծրագրի հիմնական հոդվածների ֆինանսավորման օգտագործման մասին հաշվետվություն	8
Դրամաշնորհային գործառնական հաշվի հաշվետվություն	9
Համաֆինանսավորման գործառնական հաշվի հաշվետվություն	10
Հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	11

Փի-Էյչ-Փի Փարթներզ ՓԲԸ
PHP Partners CJSC

Իրավաբանական հասցե՝ ՀՀ, Երևան,Ալեք Մանուկյան 15ա
Registration address: 15a Alek Manukyan, Yerevan
Գործունեության հասցե՝ ՀՀ, Երևան,Ադոնցի 2, Երազ բիզնես կենտրոն
Activity address: 2 Adonts str., Yeraz Business Centre, Yerevan, Armenia

Հեռ. Tel. (+374)10204090
Էլ-փոստ E-mail general@php.am

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Կրթական ծրագրերի կենտրոն» ծրագրերի իրականացման գրասենյակ պետական հիմնարկի ղեկավարությանը

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊՀ) կողմից իրականացվող «Օպտիկական միկրոհամակարգերի կենտրոն» դրամաշնորհային ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2023թ. մայիսի 22-ից 2025թ. հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածի Ծրագրի ֆինանսավորման աղբյուրների և դրանց օգտագործման մասին հաշվետվությունը, Ըստ Ծրագրի հիմնական հոդվածների ֆինանսավորման օգտագործման մասին հաշվետվությունը, Դրամաշնորհային գործառնական հաշվի հաշվետվությունը, Համաֆինանսավորման գործառնական հաշվի հաշվետվությունը, ինչպես նաև Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունն առ 30 հունիսի 2025թ. և այլ բացատրական նյութեր:

Մեր կարծիքով կից հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում 2023թ. մայիսի 22-ից 2025թ. հունիսի 30-ն ընկած ժամանակաշրջանի ընթացքում ստացված ֆոնդերի և ճանաչված ծախսերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն ծանոթագրություն 2-ում նկարագրված հաշվապահական հաշվառման քաղաքականության, Դրամաշնորհային 1/23-CIF է պայմանագրի և ՆՄՀ ղեկավար ձեռնարկի համապատասխան հոդվածների:

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրեցինք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներին) համապատասխան: Այդ ստանդարտների համաձայն մեր պատասխանատվությունը ներկայացվում է ստորև՝ մեր Հաշվետվության *«Աուդիտորի պատասխանատվությունը հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* պարբերությունում: Մենք հանդիսանում ենք «Երևանի պետական համալսարան» հիմնադրամից (ԵՊՀ) անկախ աուդիտորներ՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն այդ կանոնագրքի: Մենք կարծում ենք, որ մեր կողմից հավաքագրված աուդիտորական ապացույցները բավարար համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Հանգամանքները լուսաբանող պարագրաֆ.օգտագործման և բաշխման սահմանափակում

Մենք ուշադրություն ենք հրավիրում հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունների Ծանոթագրություն 2(ա)-ի վրա, որտեղ նկարագրվում է հաշվապահական հաշվառման հիմունքը: Հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են «Կրթական ծրագրերի կենտրոն» ծրագրերի իրականացման գրասենյակ պետական հիմնարկին տեղեկատվություն տրամադրելու համար՝ Համաշխարհային բանկի «Կրթության բարելավման լրացուցիչ

ֆինանսավորմամբ ծրագրի» (ծրագիր) շրջանակներում Նորարարությունների մրցակցային հիմնադրամի պահանջները բավարարելու հարցում նրանց օգնելու համար: Արդյունքում, հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունները չեն կարող տեղին լինել մեկ այլ նպատակի համար: Մեր կարծիքը չի ձևափոխվում այս հարցի առումով:

Մենք ուշադրություն ենք հրավիրում հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունների 1(բ) ծանոթագրության վրա, որտեղ նշվում է, որ նախագծի ավարտի ամսաթիվը 2025 թվականի հունիսի 30-ն է: Մեր կարծիքը այս հարցի վերաբերյալ չի փոփոխվել:

Ղեկավարության և կառավարման լիազոր անձանց պատասխանատվությունը հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունների կազման և արդար ներկայացման համար՝ Ծանոթագրություն 2(ա) ծանոթագրությունում նկարագրված հաշվապահական քաղաքականության, 1/23-CIF դրամաշնորհային համաձայնագրի համապատասխան կետերի և Նորարարությունների մրցակցային հիմնադրամի գործառնական ձեռնարկի, ինչպես նաև այնպիսի ներքին հսկողության համակարգի ներդրման համար, որը ղեկավարության կարծիքով անհրաժեշտ է հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար, որոնք զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ նրանից դրանք առաջացել են կեղծիքի, թե սխալի հետևանքով:

Հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատվություն է կրում Ծրագրի անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Ծրագիրը լուծարելու կամ Ծրագրի գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի հաշվետվություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ների համաձայն իրականացվող աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և ցուցաբերում մասնագիտական կասկածամտություն: Մենք նաև՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի պատճառով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում.
- հասկանում ենք ներքին հսկողության համակարգն այնքանով, որքանով դա վերաբերում է աուդիտի առաջադրանքին՝ նախագծելու աուդիտի ընթացակարգերն այնպես, որ դրանք տեղին լինեն կոնկրետ հանգամանքներում, սակայն ոչ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (ԵՊՀ) կառավարման ներքին հսկողության համակարգի արդյունավետության մասին կարծիք արտահայտելու նպատակով.
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը.
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի ղեկավարության կողմից կիրառման տեղին լինելը և հիմնվելով հավաքագրված աուդիտորական ապացույցների վրա գնահատում ենք, արդյոք առկա է էական անորոշություն այն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել ԵՊՀ-ի անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրակացնենք, որ առկա է էական անորոշություն, մենք պետք է ուսումնասիրենք ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումները, իսկ եթե այդ բացահայտումները համապատասխան չեն, ապա աուդիտի եզրակացությունում պետք է ձևափոխենք մեր կարծիքը: Մեր կողմից ներկայացվող եզրակացությունները հիմնված են աուդիտորական ապացույցների վրա, որոնք ձեռք են բերվել մինչև աուդիտի հաշվետվության ամսաթիվը: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող է խաթարել ԵՊՀ-ի անընդհատության հիմունքի կիրառումը.
- երբ ֆինանսական հաշվետվությունները պատրաստվում են ճշմարիտ ներկայացման հիմունքի համաձայն, գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը՝ ներառյալ բացահայտումները, և արդյոք ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում են հիմքում ընկած գործառնությունները և դեպքերն այնպես, որ ապահովի ճշմարիտ ներկայացում.
- Ի լրումն այլ հարցերի, կառավարման լիազոր անձանց հետ քննարկում ենք աուդիտի ընդգրկման շրջանակը և ժամկետը, ինչպես նաև նշանակալի բացահայտումները, ներառյալ՝ աուդիտի ընթացքում մեր կողմից հայտնաբերած ներքին հսկողության համակարգի նշանակալի թերությունները:

Հարգանքով,

Հովհաննես Պետրոսյան
Տնօրեն

Լիլիթ Մինասյան
Աուդիտորական ծառայությունների
ղեկավար

«Փի-Էյջ-Փի Փարթնըրզ» ՓԲԸ
24 նոյեմբերի 2025թ.

AMD	Ծանոթ.	Փաստացի
Ակտիվներ		
Ոչ ընթացիկ ակտիվներ		
Դրամաշնորհային ծրագրի կուտակային ծախսեր		247,687,244
		247,687,244
Ընթացիկ ակտիվներ		
Մնացորդներ բանկերում	5	755,768
		755,768
Ընդամենը ակտիվներ		**248,443,012**
Ֆոնդեր և պարտավորություններ		
Ֆոնդեր		
Դրամաշնորհային ծրագրի կուտակային ֆինանսավորում	4	247,577,160
Այլ եկամուտներ		110,084
Պարտավորություններ		
Կրեդիտորական պարտք	5	755,768
Ընդամենը միջոցներ և պարտավորություններ		**248,443,012**

Ծրագրի հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունները հաստատվել և ստորագրվել են 2025 թվականի նոյեմբերի 24-ին:

Հովհաննես Հովհաննիսյան
Ռեկտոր

Ռաֆիկ Գրիգորյան
Գլխավոր Հաշվապահ

Այս հաշվետվությունը պետք է ընթերցվի Հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 11-ից մինչև 16-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

AMD	Փաստացի		Պլանավորված		Տարբերություն	
	Ժամանակաշրջանի համար	**Կուտակային**	**Ժամանակաշրջանի համար**	**Կուտակային**	**Ժամանակաշրջանի համար**	**Կուտակային**
Ստացված ֆինանսավորում						
Դրամաշնորհային միջոցներ (ծանոթ. 4)	198,061,728	198,061,728				
Համաֆինանսավորման միջոցներ (ծանոթ. 4)	49,515,432	49,515,432				
Այլ եկամուտներ	110,084	110,084				
Ընդամենը	**247,687,244**	**247,687,244**				
Ֆինանսավորման օգտագործում						
Իրավասու ծախսեր	247,687,244	247,687,244	250,020,000	250,020,000	(2,332,756)	(2,332,756)
Ընդամենը	**247,687,244**	**247,687,244**	**250,020,000**	**250,020,000**	**(2,332,756)**	**(2,332,756)**
Շրջանառու կապիտալի զուտ աճ	-	-				

Այս հաշվետվությունը պետք է ընթերցվի Հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 11-ից մինչև 16-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

AMD	Փաստացի			Պլանավորված			Տարբերություն		
	Դրամաշնորհ	Համաֆինանսավորում	Ընդամենը	Դրամաշնորհ	Համաֆինանսավորում	Ընդամենը	Դրամաշնորհ	Համաֆինանսավորում	Ընդամենը
Լաբորատոր սարքավորումներ և հարմարանքներ	188,841,538	47,210,384	236,051,922	190,680,000	47,670,000	238,350,000	(1,838,462)	(459,616)	(2,298,078)
ՆՄՀ ծրագրի աշխատակազմի աշխատավարձ	9,216,000	2,304,000	11,520,000	9,216,000	2,304,000	11,520,000	-	-	-
Այլ ծախսեր	92,257	23,065	115,322	120,000	30,000	150,000	(27,743)	(6,935)	(34,678)
Ընդամենը	**198,149,795**	**49,537,449**	**247,687,244**	**200,016,000**	**50,004,000**	**250,020,000**	**(1,866,205)**	**(466,551)**	**(2,332,756)**

Այս հաշվետվությունը պետք է ընթերցվի Հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 11-ից մինչև 16-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

	ՀՀ դրամ
Սկզբնական մնացորդը 2023 թվականի մայիսի 22-ի դրությամբ	-
Ավելացնել. Կուտակային չբացահայտված անհամապատասխանություն	
Դրամաշնորհի ստացում ժամանակաշրջանի ընթացքում	198,328,928
Դրամաշնորհային գործառնական հաշվին կանխավճարով տրված գումարի ներկա մնացորդը (1)	**198,328,928**
Վերջնական մնացորդ 2025 թվականի հունիսի 30-ի դրությամբ	267,200
Ավելացնել. Ժամանակաշրջանի ընթացքում վճարված իրավասու ծախսերի գումար	198,061,728
Ընդամենը հաշվառված կանխավճար (2)	**198,328,928**
Բացահայտման ենթակա անհամապատասխանություն (1) - (2)	-

Այս հաշվետվությունը պետք է ընթերցվի Հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 11-ից մինչև 16-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

	<< դրամ
Սկզբնական մնացորդը 2023 թվականի մայիսի 22-ի դրությամբ	-
Ավելացնել. Կուտակային չբացատրված անհամապատասխանություն	-
Համաֆինանսավորման ստացում ժամանակաշրջանի ընթացքում	50,004,000
Համաֆինանսավորման գործառնական հաշվին կանխավճարով տրված գումարի ներկա մնացորդը (1)	**50,004,000**
Վերջնական մնացորդ 2025 թվականի հունիսի 30-ի դրությամբ	488,568
Ավելացնել. Ժամանակաշրջանի ընթացքում վճարված իրավասու ծախսերի գումար	49,515,432
Ընդամենը հաշվառված կանխավճար (2)	**50,004,000**
Բացահայտման ենթակա անհամապատասխանություն (1) - (2)	-

Այս հաշվետվությունը պետք է ընթերցվի Հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 11-ից մինչև 16-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

1 Նախապատմություն

(ա) Կազմակերպությունը և կազմակերպության կողմից իրականացվող գործունեությունը

Երևանում համալսարան հիմնելու վերաբերյալ որոշումը ՀՀ նախարարների խորհրդի կողմից կայացվել է դեռևս 1919թ.-ի մայիսի 16-ին: «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (ԵՊՀ) բացման հանդիսավոր արարողությունը տեղի է ունեցել 1920 թ-ի հունվարի 31-ին Ալեքսանդրապոլի (այժմ՝ Գյումրի) առևտրային դպրոցի շենքում:
ԵՊՀ-ն կրթական, գիտահետազոտական և մշակութային ինքնավար, բարձրագույն ուսումնական հաստատություն է, որի գործունեությունը նպատակաուղղված է հայագիտական, բնագիտական, սոցիալ-տնտեսագիտական, հումանիտար գիտությունների և տեխնիկայի, մշակույթի տարբեր ուղղություններով կրթության, հիմնարար ու կիրառական գիտական հետազոտությունների և ուսումնառության կազմակերպմանը՝ հանրակրթական, միջին մասնագիտական, բարձրագույն մասնագիտական, հետբուհական մասնագիտական և լրացուցիչ կրթության մակարդակներում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված կարգով և կրթական ծրագրերով:
ԵՊՀ հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության
ԵՊՀ-ի նպատակն է՝

- անձի մտավոր, հոգևոր և բարոյական զարգացման պահանջմունքների բավարարումը՝ բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթություն ստանալու միջոցով,
- գիտության տարբեր բնագավառներում գիտական, ուսումնամեթոդական և գիտամանկավարժական հետազոտությունների իրականացումը, հայագիտության բազմակողմանի զարգացումը,
- գիտության, կրթության, տնտեսության և արվեստի զարգացումը՝ գիտամանկավարժական աշխատողների ու սովորողների գիտական հետազոտությունների և ստեղծագործական գործունեության միջոցով, ստացված արդյունքների օգտագործումը տնտեսության մեջ, հետազոտական և կրթական գործընթացում,
- բարձրագույն կրթությամբ գիտամանկավարժական աշխատողների պատրաստումը և վերապատրաստումը,
- կրթության որակի ապահովումը և բարելավման համապատասխան համակարգի ներդրումը և կանոնադրությամբ սահմանված այլ նպատակներ:

ԵՊՀ կառավարման բարձրագույն և հսկողություն իրականացնող մարմինը հոգաբարձուների խորհուրդն է, իսկ ԵՊՀ ընթացիկ գործունեությունը ղեկավարում է ռեկտորը:

ՀՀ կառավարությունը Համաշխարհային բանկի հետ կնքել է վարկային համաձայնագիր (ՎՀՄԲ վարկ թիվ 9389-AM)՝ Կրթության բարելավման նախագծի իրականացմանը աջակցելու համար, ներառյալ լրացուցիչ ֆինանսավորումը («Ծրագիր»):

Ծրագրի հիմնական բաղադրիչներից մեկը Նորարարությունների մրցակցային հիմնադրամի (ՆՄՀ) լիարժեք իրականացումն է, որն ուղղված է բարձրագույն ուսումնական հաստատությունների կարողությունների և մրցունակության բարձրացմանը: Ծրագրի

ֆինանսավորումը համատեղ տրամադրվում է Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի (ՎԶՄԲ) և ՀՀ կառավարության կողմից: «Կրթական ծրագրերի կենտրոն» ծրագրերի իրականացման գրասենյակ պետական հիմնարկը ֆինանսավորման դրամաշնորհը տրամադրում է փուլերով՝ հիմնվելով մրցակցային ընտրության գործընթացների արդյունքների վրա:

Բացի այդ, Երևանի պետական համալսարանը (ԵՊՀ) նպաստում է ծրագրին՝ համաֆինանսավորելով ծախսերի մի մասը:

Ըստ 2023 թվականի մայիսի 22-ին Երևանի պետական համալսարանի (ԵՊՀ) և «Կրթական ծրագրերի կենտրոն» ծրագրերի իրականացման գրասենյակ պետական հիմնարկի միջև կնքված 1/23-CIF դրամաշնորհային համաձայնագրի ԵՊՀ -ն իրականացնում է «Օպտիկական միկրոհամակարգերի կենտրոն» դրամաշնորհային ծրագիրը («Ծրագիր»): Դրամաշնորհային ծրագրի բյուջեն կազմում է 250,020,000 ՀՀ դրամ, որից 200,016,000 ՀՀ դրամը կհատկացվի դրամաշնորհային միջոցներից, իսկ 50,004,000 ՀՀ դրամը ՝ համաֆինանսավորումից:

Ծրագիրը նախատեսում է ԵՊՀ Ֆիզիկայի ինստիտուտում ստեղծել Օպտիկական միկրոհամակարգերի մշակման և հետազոտման գիտակրթական նորարար կենտրոն, որի հիմնական նպատակն է լինելու համալսարանական կրթության հետազոտական բաղադրիչի զարգացումը, միջգիտակարգային հետազոտությունների խթանումը, բարձր տեխնոլոգիաների բնագավառի կադրերի պատրաստումը, և Հայաստանի Հանրապետությունում գիտության, կրթության և արդյունաբերության միջև նոր կապերի ձևավորումը:

Ծրագրի առանձնահատուկ նպատակներն են.

- Մշակել ստեղծվող կենտրոնի առաքելությանը համահունչ նպատակների և գործառույթների կառավարման, զարգացման և կայունության ռազմավարություն:
- ԵՊՀ Ֆիզիկայի ինստիտուտում ստեղծել ժամանակակից գիտակրթական կենտրոն՝ համալրված օպտիկական և օպտոէլեկտրոնային սարքերի մշակման, դրանց միջոցով կենսաօպտիկայի, ինֆորմացիայի մշակման և հեռահաղորդակցության ոլորտներում բարձր տեխնոլոգիական միկրոհամակարգերի պատրաստման համար անհրաժեշտ նյութատեխնիկական բազայով:
- Կենտրոնի աշխատանքը կազմակերպել կիրառելով միայն էներգախնայող համակարգեր և ուսումնասիրել ավարտական արդյունք հանդիսացող օպտիկական և օպտոէլեկտրոնային համակարգերի էներգախնայողության և դրանց բարելավման հնարավորությունները:
- Պատրաստել սարքավորումները շահագործող բարձրորակ մասնագետներ:
- Կազմակերպել կարճատև դասընթացներ, սեմինարներ և գիտակրթական այցեր տեղական ու արտերկրյա համալսարաններ և/կամ լաբորատորիաներ:
- ՔՖԻ-ի հետ համագործակցությամբ ստեղծել «Օպտիկա և Ֆոտոնիկա» մագիստրոսական ծրագիր և արտասահմանյան հայտնի համալսարանների աջակցությամբ մշակել միջազգային չափորոշիչների համապատասխանեցման ռազմավարական պլան, հետագա համատեղ միջազգային մագիստրոսական ծրագրերի իրագործման նպատակով:

- Միջգիտակարգային հետազոտական ուղղություններով ստեղծել սերտ համագործակցություն կենսաբանության, քիմիայի, դեղագիտության և այլ ոլորտների մասնագետների և ուսանողների հետ:
- Ապահովել մագիստրոսական ծրագրում իգական սեռի ուսանողների և դասախոսների ներգրավվածություն՝ առկա գենդերային բևեռացվածությունը մեղմելու նպատակով:
- Կենտրոնի հետ համագործակցող արտասահմանյան գիտական խմբերի հետ միասին մշակել Ֆիզիկայի ինստիտուտում նոր գիտահետազոտական լաբորատորիաների ստեղծման ծրագրեր:
- Կնքել փոխշահավետ համագործակցության պայմանագրեր ոլորտում գործունեություն ծավալող ընկերությունների հետ (առևտրային կազմակերպություն, ձեռնարկություն)՝ ապահովելով ուսանողների ծանոթությունը և համագործակցությունը հնարավոր գործատուի հետ:
- ԵՊՀ վեբ կայքում ստեղծել կենտրոնի վերաբերյալ հատուկ էջ՝ ծրագրի հիմնախնդիրների և կենտրոնի գործունեության վերաբերյալ տեղեկատվությամբ:

Ակնկալվող արդյունքներն են.

- Կստեղծվի ժամանակակից օպտիկական և օպտոէլեկտրոնային սարքերի մշակման, դրանց միջոցով կենսաօպտիկայի, ինֆորմացիայի մշակման և հեռահաղորդակցության ոլորտներում բարձր տեխնոլոգիական միկրոհամակարգերի պատրաստման համար անհրաժեշտ նյութատեխնիկական բազայով համալրված գիտաուսումնական կենտրոն:
- Կստեղծվի նոր մագիստրոսական ծրագիր աշխատաշուկայի պահանջներին համահունչ և կմշակվի դրա միջազգային չափորոշիչների համապատասխանեցման նախագիծ:
- Կմշակվեն օպտիկական միկրոհամակարգերի մշակման ոլորտում գործունեություն ծավալող գիտահետազոտական և մասնավոր ընկերությունների հետ փոխշահավետ համագործակցության և ծառայությունների մատուցման ծրագրեր:

Հաշվետու ժամանակահատվածում դրամաշնորհային նախագծի իրականացմանը ներգրավված անձնակազմի թիվը կազմել է 4 աշխատակից:

(բ) Ծրագրի ավարտ

Ծրագրի փակման ամսաթիվը 2025 թվականի հունիսի 30-ն է:

2 Պատրաստման հիմունքներ

(ա) Համապատասխանության մասին հայտարարություն

Դրամաշնորհային ծրագրի ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են հաշվապահական հաշվառման հաշվեգրման սկզբունքով, ինչպես նաև Դրամաշնորհային 1/23-CIF համաձայնագրի համապատասխան կետերին և Նորարարությունների մրցակցային հիմնադրամի գործառնական ձեռնարկի պահանջներին համապատասխան:

Հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունները բաղկացած են հետևյալ հաշվետվություններից՝

- Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն,
- Ծրագրի ֆինանսավորման աղբյուրների և դրանց օգտագործման մասին հաշվետվություն,
- Ըստ Ծրագրի հիմնական հոդվածների ֆինանսավորման օգտագործման մասին հաշվետվություն,
- Դրամաշնորհային գործառնական հաշվի հաշվետվություն ,
- Համաֆինանսավորման գործառնական հաշվի հաշվետվություն,
- Հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ:

(բ) Հաշվետվության արժույթ

Հատուկ նպատակային ֆինանսական հաշվետվությունների հաշվետու արժույթը հայկական դրամն է (ՀՀ դրամ): ՀՀ դրամով ներկայացված բոլոր ֆինանսական տվյալները կլորացվել են մոտակա ՀՀ դրամին:

(գ) Դրամաշնորհային ծրագրի ֆինանսավորում

Պայմանագրի շրջանակներում հատկացված ֆինանսավորումը հաշվառվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես «Դրամաշնորհային ծրագրի կուտակային ֆինանսավորում» և ճանաչվում է յուրաքանչյուր համալրման ժամանակ: Ծրագրի ավարտի դրությամբ չօգտագործված, ետ վճարված կամ ետ վճարման ենթակա գումարը նվազեցվում է «Դրամաշնորհային ծրագրի կուտակային ֆինանսավորում» գումարից: Բացի այդ՝ ժամանակաշրջանի ընթացքում ստացված ֆոնդերը բացահայտվում են Ծրագրի ֆինանսավորման աղբյուրների և դրանց օգտագործման մասին մասին հաշվետվությունում:

(դ) Դրամաշնորհային ծրագրի ծախսեր

Դրամաշնորհային ծրագրի ծախսերը ճանաչվում են հաշվեգրման սկզբունքով: Դրամաշնորհային ծրագրի կուտակային ծախսերը բացահայտվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ ոչ ընթացիկ ակտիվներում: Ի հավելումն՝ ծախսերը ներառվում են Ծրագրի ֆինանսավորման աղբյուրների և դրանց օգտագործման մասին և ըստ Ծրագրի հիմնական հոդվածների ֆինանսավորման օգտագործման մասին հաշվետվություններում: Դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ձեռքբերված և ծախսերում ներառված գույքը և սարքավորումները հանդիսանում են ԵՊՀ սեփականությունը: Ծրագրի շրջանակներում ձեռքբերված հիմնական միջոցների տարրերը չեն ճանաչվում որպես այդպիսին և դրանց նկատմամբ մաշվածություն չի հաշվարկվում: Փոխարենը դրանց սկզբնական արժեքը բացահայտվել է ծանոթագրություն 7-ում:

(ե) Պլանավորված ծախսեր

Դրամաշնորհային ծրագրի պլանավորված ծախսերն իրենցից ներկայացնում են դրամաշնորհային պայմանագրով նախատեսված ծրագրի ընդհանուր բյուջեն, որը բաղկացած է դրամաշնորհային միջոցներից և համաֆինանսավորումից:

3 Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականություն

(ա) Հարկեր

Կիրառվող բոլոր հարկային պարտավորությունները հաշվարկվել և վճարվել են ՀՀ հարկային կանոնակարգերին համապատասխան:

4 Դրամաշնորհային ծրագրի ֆինանսավորում

ՀՀ դրամ	**2023թ. մայիսի 22-ից մինչև 2025թ. հունիսի 30-ն ընկած ժամանակաշրջանի համար**
Դրամաշնորհային միջոցներ	
ԾԻԳ-ի ֆինանսավորման միջոցներ	198,328,928
Ետ վճարվելիք գումար	(267,200)
	198,061,728
Համաֆինանսավորման միջոցներ	
ԵՊՀ համաֆինանսավորում	50,004,000
Ետ վճարվելիք գումար	(488,568)
	49,515,432
Ընդամենը	**247,577,160**

5 Կրեդիտորական պարտք

Կրեդիտորական պարտքը բաղկացած է «Կրթական ծրագրերի կենտրոն» պետական գործակալության նախագծերի իրականացման բաժնին և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամին վճարվելիք գումարներից: Պարտքը գոյացել է Ծրագրի ավարտի դրությամբ չօգտագործված դրամաշնորհի և համաֆինանսավորման միջոցներից, ետ վճարման ենթակա գումարներից և կազմում է 755,768 ՀՀ դրամ:

6 ԾԻԳ-ի կողմից տրամադրված դրամաշնորհային միջոցների և ԵՊՀ կողմից փոխհատուցումների համադրում

ՀՀ դրամ	ԵՊՀ	ԾԻԳ	Տարբերություն
Փուլ 1	1,224,000	1,224,000	-
Փուլ 2	31,616,000	31,616,000	-
Փուլ 3	72,229,440	72,229,440	-
Փուլ 4	10,598,400	10,598,400	-
Փուլ 5	50,918,688	50,918,688	
Փուլ 6	31,742,400	31,742,400	-
	198,328,928	**198,328,928**	**-**

7 Հիմնական Միջոցներ

Հիմնական միջոցների տարրերը բաղկացած են Ծրագրի շրջանակներում ձեռքբերված գույքից, համակարգչային և այլ սարքավորումներից, դրանց նկատմամբ մաշվածություն չի հաշվարկվում:

Ձեռքբերված և ծախսերում ներառված հիմնական միջոցները հանդիսանում են ԵՊՀ սեփականությունը:

Ծրագրի շրջանակներում գնված հիմնական միջոցներն ըստ պատկանելիության ներկայացված են ստորև.

ՀՀ դրամ	2025թ. հունիսի 30-ի դրությամբ
Լաբորատոր սարքավորումներ	236,167,244
	236,167,244